Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 05.10.2022թ. Հոկտեմբերի թիվ 40-41 (1065-1066)

Շնորհավո՛ր տոնդ, Ուսուցի՛չ

Մի բուռ Աստված

«Երկրորդ ծնող», «մտքի ճարտարապետ», «հոգու բժիշկ», «Ուսուցիչ ծնվում են, ոչ թե դառնում», «ամենավեհ կոչումը», «ամենավսեմ առաքելությունը» եւ այլն, եւ այլն... Ուսուցչին բնութագրող բազում արտահայտություններ կան, սակայն դրանք դույզնինչ չեն սպառում **Ուսուցիչ** երեւույթի էությունը: Ամենաչար ու համառ մարդն անգամ երբեւէ մի բարի խորհրդի ականջալուր-հնազանդ է լինում, ամենածույլ մարդն անգամ երբեւէ մի դաս սովորում է ու, որքան էլ երախտամոռ լինի, հիշում է այդ խորհուրդ-դասը տվողին... Ուրեմն, մենք՝ սովորական մահկանացուներս, որքա՜ն առավել գնահատում, հարգում ու սիրում ենք մեզ **գիտելիք** ու **վարք** տվողներին, մեզ դեպի **ճշմարտություն** ու **լույս** առաջնորդողներին...

...*Բազում են կոչյալք, սակայն սակավ են ընտրյալք*՝ ասում է **Աստվածաշունչը**: *Դո՛ւք եք աշխարհի աղը,* ասում է **Աստված**, գնացե՛ք եւ քարոզե՛ք, Աստծո **խոսքը** հասցրե՛ք ժողովուրդներին, հոգու **լույսը**՝ մարդկանց... Ուսուցիչներ էին **առաքյալները,** ուսուցիչ էր եւ ինքը՝ **Հիսուս Քրիստոսը**: Ասել է թե՝ ուսուցչին բնութագրելիս կարող ենք նրան կոչել նաեւ **մի բուռ Աստված:**

Վերամբարձ ստացվեց: Ների՛ր եւ մի՛ մեղադրիր: Գիտեմ՝ Դու այս օրերին անասելի տխուր ես, ինչպես ամենքս՝ վերջին տարիներին...

Ծանոթ եմ Քո խոհերին: Հոգսերդ, կարիքներդ, հիասթափություններդ, երազանքներիդ ու իրականության միջեւ ալեբախումներդ հասկանալի են եւ ընդունելի: Պատկերացնում եմ, ու Դու էլ հիշում ես, երբ պատանի էիր կամ դեռատի մի աղջնակ, ծնողներիդ հորդորով, գերդաստանիդ ավանդույթներին հավատարիմ մնալու գիտակցությամբ, թե սիրելի ուսուցչիդ օրինակով՝ որոշեցիր ուսուցիչ դառնալ: Բուհում ունեցար սիրելի դասախոսներ, բայց այնտեղ ապրեցիր առաջին հիասթափությունդ. չէ՞ որ բոլորը չէ, որ ազնիվ էին ու գիտակ: Հետո սկսեցիր աշխատել: Ժամանակները փոխարինեցին մեկը մյուսին, բայց այդպես էլ կյանքը Քեզ չգոհացրեց: Եղավ պահ, երբ իշխանությունն ու հարստությունը Քեզ ճնշեցին, ու Դու ստիպված էիր ենթարկվել տգետին, զիջել անազնիվին: Ապրեցիր երկրորդ, երրորդ հիասթափություններդ ու տարիների հետ հասկացար, որ, այո՛, *«ինչ որ մի տեղ, ինչ որ մի բան սխալ է»* հաստատ: Վիլյամ Սարոյանի խոսքն է: Բայց նույն բարի հսկան կրկնում էր հաճախ՝ *փնտրի՛ր բարին ամենուրեք ու երբ գտնես, հանի՛ր նրան թաքստոցից, թող շողշողա իր ողջ փայլով...*

Դու հիմա ինձ էլ ես մեղադրում... Չէ՛, էժանագին քարոզ չէ, որ մատուցում եմ Քեզ: Պարզապես ուզում եմ, որ հավատաս, որ ես Քեզ իրոք գնահատում եմ ու նաեւ վստահ եմ, որ Դու չես փոխվել, մնացել ես նույնը: Ոչ մի ժամանակ ու իրականություն, ոչ մի հասարակարգ ու կացութաձեւ Քեզ չեն կարող փոխել... որովհետեւ Դու **Ուսուցիչ** ես... Այսինքն՝ մի բուռ **Աստված:** Քո վարձը Դու պիտի ստանաս նախ Երկրի վրա, ապա՝ Երկնքում: Ու եթե այն անբավարար թվա քեզ այս կյանքում (չի եղել որեւէ ժամանակ, որ այն բավարար լիներ), Դու մի՛ նեղսրտիր ու մի՛ մեղադրիր որեւէ մեկին: Չէ՞ որ **Աստված** բոլորիս հավասարաչափ է սիրում, բայց տարբեր *շնորհներ* ու տարբեր *ճակատագրեր* է պարգեւում մեզ... Ու եթե որեւէ մեկին մեղադրելու լինես, հիշի՛ր՝ բոլորը չէ, որ ունեն Քո մտածողության սահմանները... Հիշի՛ր ու մի՛ մեղադրիր...

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ. պայքարե՞լ չարի դեմ, թե՞ բարիք ստեղծել... էլի վերամբարձ հնչեց, բայց Դու ների՛ր ու հավատա՝ Քո կոչումը, Քո անելիքը, Քո գործը հենց բարիք ստեղծելն է, որ կա: Դու Քո բաժին գո՛ործն արա ու Քո Խաչը կրի՛ր անտրտունջ, որ **Աստծո** առաջ, ժողովրդիդ առաջ, սաներիդ առաջ խիղճդ լինի մաքուր, ու *գործդ միշտ ավելին լինի, քան վարձքդ երկրի վրա...* Քո կոչումն է, Քո ճակատագիրը, Քո Խաչը. չէ՞ որ Դու **Ուսուցիչ** ես, մի բուռ **Աստված:**

Արդ, շնորհավո՛ր տոնդ, **Ուսուցի՛չ,** շնորհավո՛ր տոնդ, մի բուռ **Աստված:**

Գ.Մ.



Շնորհավորանքի խոսք

Հարգելի՛ ուսուցիչներ,

Դարեր շարունակ ուսուցիչն է կերտել մեր ազգի մտավոր եւ բարոյական կերպարը: Չնայած դժվարություններին՝ ուսուցիչն է իր անձնվեր աշխատանքով նպաստել մեր պետության կայացմանն ու հզորացմանը: Ուսուցիչն իր իմաստությամբ, բարությամբ ու համբերատարությամբ կրթում ու դաստիարակում է մեր երկրի ապագա քաղաքացիներին: Ձեր դժվարին աշխատանքը արժանի է խորին հարգանքի ու ակնածանքի:

Շնորհավորում ենք մասնագիտական տոնի առիթով: Հաջողություններ ձեզ ազգանպաստ առաքելության իրականացման ճանապարհին: Մաղթում ենք քաջառողջություն, բարեկեցիկ կյանք ու հոգեկան անդորր:

Գրիգոր ՂԱՐԻԲՅԱՆ
ՀՀ ԿԳ Աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ծյուղային հանրապետական միության նախագահ

Կառավարություն

Հաստատվել է դպրոցների ֆինանսավորման կարգը

ՀՀ կառավարության նիստում որոշում է կայացվել սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները եւ մեթոդաբանությունը, ինչպես նաեւ դպրոցների՝ պետբյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը:

«Հանրակրթության մասի» ՀՀ օրենքում 2020 թվականի մարտի 6-ին կատարված փոփոխությունների համաձայն՝ փոխվել է ֆինանսավորման մեթոդաբանությունը. հանվել է ըստ աշակերտի թվի ֆինանսավորման մեխանիզմը: Ներկայում գործող ֆինանսավորման բանաձեւը չի լուծում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ համընդհանուր ներառականությունը, ուսուցչական եւ ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների եւ աշխատավարձերի նկատմամբ միասնական մոտեցում ցուցաբերելը, ինչպես նաեւ որոշ ծախսատեսակների նորմավորումը:

շարունակությունը՝ էջ 4

Փոփոխություններ լիցենզավորման կարգերում

Կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել ՀՀ-ում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերում եւ լիցենզիայի ձեւերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Փաստաթղթի մշակումը պայմանավորված է 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված՝ *«Լիցենզավորման մասին»* եւ *«Կրթության մասին»* օրենքներում լրացումներ կատարելու հանգամանքով, որոնցով նախադպրոցական ծառայությունները եւ այլընտրանքային ծրագրերի իրականացումը համարվում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

շարունակությունը՝ էջ 4

Աշխարհի հետ

Հանդիպումներ Մեխիկոյում

Սեպտեմբերի 28-30-ը Մեխիկոյում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի *«Մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի»* շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** գործընկերային հանդիպում է ունեցել Հունաստանի Հանրապետության մշակույթի եւ սպորտի նախարար **Լինա Մենդոնիի** եւ Կիպրոսի Հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ **Յանիս Թումազիսի** հետ:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանը:**

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են համագործակցության ընդլայնման, մշակութային տուրիզմի զարգացման, միջազգային հարթակներում համատեղ ծրագրերով հանդես գալու, ինչպես նաեւ եռակողմ ձեւաչափով համագործակցության հնարավորությունները:

շարունակությունը՝ էջ 2

Աշխարհի հետ

Մշակութային ժառանգության պաշտպանության հարցեր

Սեպտեմբերի 28-30-ը Մեխիկոյում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի *«Մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի»* շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** հանդիպել է *«Կոնֆլիկտային տարածքներում ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի»* գործադիր տնօրեն **Վալերի Ֆրիլենդի** հետ:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանը:**

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ում եւ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված հարցեր, մասնավորապես՝ հուշարձանների վերականգնման եւ թանգարանների ճգնաժամային պլանների կազմման հնարավորությունները:

Նշենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի *«Մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի»* շրջանակում Դաշինքը կազմակերպել էր *«Պաշտպանելով մեր ժառանգությունը՝ կառուցենք խաղաղություն»* խորագրով փաստագրական ցուցադրությունը, որը ներկայացնում էր Դաշինքի աջակցությամբ տարբեր երկրներում իրականացվող ծրագրերը: Ցուցադրության մեջ ներկայացված լուսանկարային պաստառներն ուղեկցվում էին ընդլայնված իրականության (AR) փորձով, որը հնարավորություն է տալիս նորագույն տեխնոլոգիաների միջոցով բացահայտել ներկայացված հուշարձանների եւ թանգարանների վերականգնման պատմությունները: Հայկական պատմամշակութային ժառանգությունը ներկայացված է եղել առանձին ֆոտոպատումով:

Հանդիպումներ Մեխիկոյում

սկիզբը՝ էջ 1

Նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ շատ կարեւոր է այս դժվարին ժամանակաշրջանում համախմբել ուժերը՝ դիմագրավելու առկա մարտահրավերներին եւ ամրապնդելու համագործակցությունը՝ հանուն ժառանգության պահպանության, կայուն զարգացման եւ խաղաղության ապահովման:

Զրույցի ընթացքում Կիպրոսի մշակույթի նախարարի տեղակալ Յանիս Թումազիսը կարեւորել է երկու ժողովուրդների պատմական փոխառնչությունները, ինչպես նաեւ բարձր գնահատել հայկական համայնքի դերը երկրի տարբեր ոլորտներում:

Պաշտոնական

Փոփոխություններ տարակարգի շնորհման կարգում

Կառավարության նիստում հաստատվել է հանրակրթական դպրոցների ուսուցիչներին որակավորման տարակարգի շնորհման եւ հավելավճարի տրամադրման կարգը:

Սահմանվել են նաեւ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձեւավորման եւ գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու ընթացակարգերը: Նախագիծը ներկայացրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:** Նա նշել է, որ ուսուցիչների վարձատրության համակարգի բարելավումը պետական քաղաքականություն է՝ փաստելով, որ աշխատավարձի բարձրացումը տեղի է ունենում ոչ թե մեխանիկորեն, այլ մասնագիտական կատարելագործման հետ փոխկապակցմամբ:

Ուսուցչի որակավորման տարակարգի համակարգը միտված է ուսուցիչների մանկավարժական հմտությունների զարգացմանը: Դեռեւս 2012 թվականից ներդրված տարակարգի համակարգը, ինչպես ցույց է տալիս անցած 10 տարիների փորձը եւ իրավիճակի վերլուծությունը, արդյունավետ չի եղել:

Տարակարգի համակարգը գործում էր կամավորության սկզբունքով՝ ուսուցչի նախաձեռնությամբ: Համակարգը գործում էր հերթականության սկզբունքով՝ որակավորման առաջին աստիճանի տարակարգ ստանալուց հետո երկրորդ աստիճանի տարակարգի համար ուսուցիչը կարող է դիմել միայն 2 տարի անց, երրորդի համար՝ երկրորդը ստանալուց 3 տարի անց եւ չորրորդ աստիճանի տարակարգի համար՝ երրորդը ստանալուց 4 տարի անց: Այսինքն, ընդհանուր առմամբ, չորրորդ՝ բարձրագույն աստիճանի տարակարգ ստանալու եւ աշխատավարձի 50 տոկոսի չափով հավելավճար ստանալու համար ուսուցչից պահանջում էր առնվազն 9 տարի: 2021 թվականի դրությամբ Հայաստանի շուրջ 37.500 ուսուցիչներից որակավորման տարակարգ շնորհվել է 2321 ուսուցչի, որից 2154-ին՝ առաջին, 160-ին՝ երկրորդ, 7-ին՝ երրորդ աստիճանի: Որակավորման չորրորդ աստիճանի տարակարգ որեւէ ուսուցչի չի շնորհվել: Այսպիսով, նույնիսկ եթե ուսուցիչը համապատասխանում է չորրորդ աստիճանի տարակարգին, ապա չի կարող դիմել դրա համար, քանի դեռ չի անցել նախորդող 3 շրջափուլով:

«Այս տարիների ընթացքում որակավորման տարակարգ է շնորհվել ուսուցիչների ընդամենը 6,2 տոկոսին: Համակարգն արդյունավետ չի եղել մի քանի պատճառներով. սահմանված բնութագրերը, որոնց միջոցով ուսուցիչը պետք է ստանար որակավորման տարակարգ, ավելի շատ բնորոշում էին ոչ թե ուսուցչի մանկավարժական աշխատանքը, այլ նրա հավելյալ գործունեությունը, օրինակ՝ հոդվածներ հրապարակելու ակտիվությունը կամ օլիմպիադաներում աշակերտների մրցանակային տեղեր գրավելու ցուցանիշը: Անշուշտ, սրանք եւս կարեւոր են, սակայն ուսուցչի ամենօրյա աշխատանքի ամենածանրակշիռ բաղադրիչը չեն: Բացի դրանից՝ կար որոշակի հերթականության եւ ժամկետների սկզբունք, որը հնարավորություն չէր տալիս ուսուցչին ստանալու տարակարգի ամենաբարձր աստիճանը: Նույնիսկ եթե ուսուցիչն ուներ բոլոր տվյալները՝ ստանալու չորրորդ աստիճանի որակավորման տարակարգ, չէր կարող ստանալ, քանի դեռ չէր ստացել դրան նախորդող առաջին, երկրորդ եւ երրորդ աստիճանի տարակարգեր: Ասվածի լավագույն վկայությունն այն է, որ անցած 10 տարվա ընթացքում որեւէ ուսուցիչ չորրորդ աստիճանի (սա ամենաբարձր աստիճանն է) տարակարգ չի ստացել, ինչը հնարավորություն կտար նրան 50 տոկոս հավելավճար ստանալու: Կար նաեւ պահանջ, որ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում ուսուցիչը զրկվում էր ստացած որակավորման տարակարգից, ինչն ընդհանրապես անտրամաբանական է, քանի որ տարակարգը բնութագրում է ուսուցչին, ոչ թե դպրոցին: Նոր կարգով տարակարգերի համակարգը փոխկապակցել ենք ուսուցչի մասնագիտական ստանդարտներին եւ չափանիշներին, որոնք հաստատված են ԿԳՄՍ նախարարի հրամանով: Նշված ստանդարտներն ու պահանջները ներկայացնում են պետության հիմնական պահանջներն ուսուցչից՝ դասը վարելու, պլանավորելու, մանկավարժական համայնքի զարգացմանը մասնակցելու եւ այլ ուղղություններով: Այսինքն՝ մենք ներդնում ենք ուսուցչի կարիերայի զարգացման նոր մոտեցում: Նոր կարգով սահմանվել են ավագ, հմուտ, վերապատրաստող եւ հետազոտող ուսուցիչներին շնորհվող 1-4 աստիճանի տարակարգերի բնութագրերը»,- գործադիրի նիստում նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նրա խոսքով՝ նոր կարգի ընդունումից հետո առաջին եւ երկրորդ աստիճանի տարակարգի համար դիմելու հնարավորություն ունեցող ուսուցիչների շրջանակն էականորեն կընդլայնվի: Միաժամանակ ստեղծված է հնարավորություն՝ ավելի բարձր որակավորման պահանջների համապատասխանելու դեպքում, ուսուցիչը կարող է դիմել եւ միանգամից ստանալ տարակարգի ավելի բարձր աստիճան: Ուսուցչի որակավորման տարակարգը 5 տարի ժամկետով է տրվում:

Ըստ տարակարգի շնորհման միջոցով ուսուցչի մասնագիտական առաջխաղացման՝ տրվել են բնութագրող անվանումներ՝ 1-ին եւ 2-րդ տարակարգի դեպքում՝ ավագ եւ հմուտ ուսուցիչ, 3-րդ եւ 4-րդ տարակարգի դեպքում՝ վերապատրաստող եւ հետազոտող ուսուցիչ:

Նա նաեւ տեղեկացրել է, որ ուսուցչի վարձատրությունը բարելավելու նպատակին է միտված նաեւ ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգը, որի շրջանակում ուսուցչի մասնագիտական գիտելիքների ստուգում է կատարվում, եւ, ըստ ցուցաբերած արդյունքի, տրամադրվում է հավելավճար՝ աշխատավարձի 30-50 տոկոսի չափով, որը հաշվարկվում է հավելավճար ստացող ուսուցչի համար սահմանված 200 հազար դրամ դրույքային աշխատավարձի նկատմամբ: Ըստ ժաննա Անդրեասյանի՝ որակավորման տարակարգի համակարգը գործելու է կամավոր ատեստավորման համակարգին զուգահեռ՝ ապահովելով աշխատավարձի բարելավման եւս մեկ հնարավորություն:

Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է արդիականացնել տարակարգի շնորհման գործընթացը՝ այն փոխկապակցելով ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին, միաժամանակ *«որակավորման տարակարգ»* հասկացության սահմանումը *«Հանրակրթության մասին»* օրենքում խմբագրվել է՝ փոխկապակցելով *«մասնագիտական չափանիշ»* հասկացությանը, որից ելնելով էլ 3-րդ եւ 4-րդ աստիճանի տարակարգի դիմելու հնարավորություն ընձեռվում է կամավոր ատեստավորման առնվազն անցողիկ միավորից բարձր արդյունք ցուցաբերած ուսուցիչներին որպես մասնագիտական զարգացմանը խթանող կարեւոր լուծում:

Տարակարգ ստացած ուսուցչին տրվում է հավելավճար հետեւյալ չափերով՝

- 1-ին աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 10 %-ի չափով.

- 2-րդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 20 %-ի չափով.

- 3-րդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 30 %-ի չափով.

- 4-րդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 50 %-ի չափով:

Տարակարգ ստացած ուսուցչի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:

Հավելենք, որ նոր կարգով տարակարգը պահպանվում է, եթե հնգամյա ժամկետի ընթացքում ուսուցիչը տեղափոխվում է մի հաստատությունից մեկ այլ հաստատություն:

Իսկ տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում աշխատանքից ազատվելուց հետո, երբ ուսուցիչը նորից անցնում է աշխատանքի որեւէ դպրոցում, ապա տարակարգը պահպանվում է հնգամյա ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

Հանրակրթական ծրագիր իրականացնող այլ հաստատությունում համատեղությամբ աշխատող տարակարգ ստացած ուսուցչին հավելավճարը տրամադրվում է միայն հիմնական աշխատավայրում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդ

Քննարկվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարին կից հասարակական խորհուրդը գումարել է իր հերթական նիստը: Նիստի օրակարգում ներառված էր մեկ հարց՝ *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* ՀՀ օրենքի նախագծի ներկայացումը: Ողջունելով խորհրդի անդամներին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը** ներկայացրել է օրենքի նախագծի հիմնական դրույթները: Նա հիշեցրել է, որ օրենքի նախագիծը երկու դրույթով ճանաչվել էր հակասահմանադրական՝ կառավարման խորհրդի ձեւավորման մասով, եւ վերադարձվել էր խմբագրման: Ըստ փոխնախարարի՝ նոր նախագծի ներկայացումը մի փոքր հետաձգվել է՝ ՀՀ կառավարության կողմից *«Կրթության զարգացման՝ մինչեւ 2030 թվականը պետական ծրագրի»* ընդունման հետ կապված, որից պետք է բխեն ոլորտի հիմնական օրենքները:

Անդրադառնալով օրենքի նախագծի հիմնական դրույթներին՝ Կարեն Թռչունյանը նշել է, որ բարձրագույն կրթության ոլորտում անցում կկատարվի եռաստիճան համակարգի, իսկ գիտական աստիճանաշնորհման ներկայիս երկաստիճան համակարգից՝ անցում միաստիճան համակարգի: Մասնավորապես նախատեսվում է ներկայիս ասպիրանտական ծրագրերը համապատասխանեցնել համաեվրոպական չափանիշներին՝ դրանք ընդգրկելով բարձրագույն կրթության համակարգում որպես որակավորման երրորդ աստիճան՝ կրթական ծրագիր, որի ավարտին շնորհվում է դոկտորի (PhD) որակավորում:

Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ ըստ նախագծի՝ բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ: Նրա խոսքով՝ սա հնարավորություն կտա ուսանողներին կարգավորել իրենց ուսումնառության բեռնվածությունը: Այս համատեքստում փոխնախարարն անդրադարձել է նաեւ ուսանողների եւ դասախոսների ներքին շարժունության հարցերին:

Հաջորդ դրույթը վերաբերել է համատեղ կրթական ծրագրերի իրականացման եւ համատեղ որակավորման շնորհման հարցերին: Սահմանվել է, որ երկու եւ ավելի բուհեր կարող են համատեղ մշակել եւ իրականացնել կրթական ծրագիր եւ շնորհել բարձրագույն կրթության որակավորում, որը հավաստվում է մասնակից բուհերի կողմից շնորհված միասնական դիպլոմով կամ մասնակից բուհերից մեկի կամ յուրաքանչյուրի առանձին դիպլոմներով:

Անդրադառնալով կրթական ծրագրերի հավատարմագրման դրույթին՝ Կարեն Թռչունյանը փաստել է, որ նոր կարգավորմամբ ամրագրվել է՝ բուհերի կրթական ծրագրերը պետք է անցնեն պարտադիր հավատարմագրում:

«Եթե մեկ անգամ ծրագիրը չի անցնում հավատարմագրում, ապա բուհին հնարավորություն կընձեռվի որոշակի ժամկետում բարելավել այն եւ կրկին դիմել: Եթե սահմանված ժամկետում ծրագիրը նորից չի անցնում հավատարմագրում, ապա այն զրկվում է լիցենզիայից: Այդ դեպքում, իհարկե, տեղի կունենա կրթական ծրագրերի խոշորացում»,- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ հավատարմագրման եւ նախահավատարմագրման կարգերը համահունչ կլինեն լիցենզավորման կարգին՝ որակյալ կրթություն տրամադրելու նպատակով:

Կրթական ծրագրերի լիցենզավորման գործընթացի մասով՝ Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ լիցենզավորման համար՝ որպես հիմք, նախատեսվում են նոր պայմաններ, որոնք պետք է համապատասխանեն սահմանված վերջնաարդյունքներին:

Օտար լեզուներով կրթական ծրագրերի կամ առանձին դասընթացների իրականացման դրույթի վերաբերյալ փոխնախարարը նշել է, որ ներկայում չի թույլատրվում օտար լեզվով կրթություն կազմակերպել: Նոր կարգավորմամբ՝ ամբողջական կրթական ծրագիրը լինելու է հայերեն, սակայն առանձին դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ, ուսումնական մոդուլներ եւ կրթական ծրագրեր կարող են դասավանդվել օտար լեզվով, ինչը բարձրագույն կրթության միջազգայնացման կարեւոր նախապայման է:

Անդրադառնալով բուհերի ընդունելության կազմակերպման նոր սկզբունքների եւ մեխանիզմների ներդրման հարցին՝ Կարեն Թռչունյանը նշել է, որ նախատեսվում է գնալ այն ճանապարհով, որ ընդունելության քննությունները վերանան, եւ դրանք անցկացվեն կրեդիտների փոխճանաչմամբ, ինչպես զարգացած մի շարք երկրներում:

«Բայց, քանի որ ավագ դպրոցը դեռ չունի կրեդիտային համակարգ, առայժմ չենք կարող դա անել: 2026 թ. մայիսին կրեդիտային համակարգով կավարտեն առաջին աշակերտները, եւ միայն այդ ժամանակ կարող ենք ունենալ առաջին փորձնական հնարավորությունը՝ առանց քննությունների ընդունելություն՝ բուհերի կողմից համապատասխան կրեդիտների ճանաչմամբ»,- փաստել է փոխնախարարը:

Նրա խոսքով՝ օրենքի հիմնական թիրախներից մեկը վերաբերում է բուհերի ֆինանսավորմանը. *«Մենք իրավական հնարավորություն եւ լիազորություն ենք ստեղծում, որպեսզի բուհերի ֆինանսավորման մեխանիզմները փոփոխվեն: Հիմա բուհերը ֆինանսավորվում են ուսանող-դասախոս հարաբերակցությամբ: Նոր կարգավորումը ենթադրում է բազային եւ կատարողական ցուցանիշների հիման վրա ֆինանսավորում՝ նոր բանաձեւով»,-* նշել է Կարեն Թռչունյանը՝ հավելելով, որ փոխվել են նաեւ ուսանողներին տրվող աջակցության ձեւերը: Մասնավորապես սահմանվել են հետեւյալ աջակցության ձեւերը՝ նպաստ, որը կտրվի սոցիալապես խոցելի եւ այլ առանձին խմբերի ուսանողներին, եւ պետական կրթաթոշակ, որը կտրամադրվի միայն բարձր առաջադիմության դեպքում:

Անդրադառնալով բուհի կառավարման մոդելին՝ Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ կառավարման խորհուրդների անդամների թիվը սահմանվել է 12, որոնցից 6-ին ընտրում է համալսարանի ակադեմիական խորհուրդը, 6-ին՝ նշանակում համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը:

«Ներկայում ունենք բուհերի խոշորացման ծրագիր, եւ բարեփոխումների ընթացքն ապահովելու նպատակով, ըստ նախագծի, այս բուհերում լիազոր մարմնի ղեկավարը մինչեւ հինգ տարի ժամկետով կնշանակի ժամանակավոր կառավարիչ-ռեկտորներ եւ կձեւավորի 12 անդամից կազմված կառավարման ժամանակավոր խորհուրդներ՝ նշանակելով խորհրդի նախագահներ, մինչեւ պետությունը կներդնի որակի համապատասխան չափանիշներ»,- նշել է նա:

Գիտության ոլորտում հիմնական խնդիրը, ըստ փոխնախարարի, վերաբերել է ակադեմիայի կարգավիճակին (գիտական, գիտահետազոտական ինստիտուտներ):

«Նոր նախագծով մենք առաջարկում ենք, որ ակադեմիան պահպանի իր կարգավիճակը, որն իր կազմում կմիավորի ակադեմիայի անդամներին, բաժանմունքները, աշխատակազմը եւ համակարգի կազմակերպությունները: Ակադեմիայի գործառույթներից են գիտության զարգացման եւ գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունքների ներդրման, ինչպես նաեւ սահմանված կարգով մասնագիտական եւ փորձագիտական խորհրդատվության տրամադրումը: Բարեփոխումների շրջանակում այս նոր համակարգով կընդլայնվեն նաեւ Գիտության կոմիտեի լիազորությունները: Ունենք նաեւ ինստիտուտների խոշորացման խնդիր. ակադեմիական ինստիտուտները եւ բուհերը պետք է գործեն ավելի սերտ համագործակցությամբ, որի արդյունքում բուհերում կմեծանա հետազոտական բաղադրիչը: Այս նպատակով բազային ֆինանսավորման պահանջները որոշակի չափով կփոխվեն»,- շեշտել է նախարարի տեղակալը:

Կարեն Թռչունյանի զեկույցից հետո հասարակական խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել նրան: *«Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի»* ներկայացուցիչ Սիրանուշ Դրմոյանին հետաքրքել է դասախոսների ներքին շարժունության հետ կախված հարցը: Նա նշել է, որ ներկայում օրենդրական որեւէ սահմանափակում չկա, բայց իրականում այն չի իրականացվում: Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանն անդրադարձել է բուհական ամբիոնների արդյունավետության գնահատման, գիտական գրականության եւ հրատարակչությունների, ինչպես նաեւ կրեդիտների կուտակման եւ շարժունության համակարգին: *«Համաչափ զարգացման երիտասարդական կենտրոնը»* ներկայացնող Ալա Ավագյանը բարձրաձայնել է բուհերի կրթական ծրագրերի, իսկ *«Օքսեջեն»* երիտասարդության եւ կանանց իրավունքների պաշտպանության հիմադրամի ներկայացուցիչ Կարեն Այվազյանը՝ կրեդիտային համակարգի հետ կապված ռիսկերի, գիտնականների կատարելագործման եւ խրախուսման մեխանիզմների հետ կապված հարցեր: *«Դասավանդիր, Հայաստանի»* ներկայացուցիչ Վարդան Ղափլանյանն անդրադարձել է բուհերի կողմից համատեղ ծրագրերի իրականացման, իսկ Քրիստինա ՕՇատուրյանը՝ ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման խնդիրներին: *«Համագործակցային կրթական ծրագրեր»* ՀԿ-ի ներկայացուցիչ Լուսինե Թոփչյանը բարձրացրել է մանկավարժական բուհի, իսկ *«Երեւանի եվրոպական ուսանողների ֆորում ասոցիացիայի»* ներկայացուցիչ Կալիպսո Բզնունին՝ պետական կրթաթոշակի եւ նպաստի խնդիրներին վերաբերող հարցեր:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը շնորհակալություն է հայտնել շահագրգիռ եւ արդյունավետ քննարկման համար՝ վստահեցնելով, որ նախագծի հանրային քննարկման փուլում հնչած առաջարկները, ըստ անհրաժեշտության, կներառվեն նախագծում:

Նիստի ավարտին ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը հավանության է արժանացրել *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* ՀՀ օրենքի նախագիծը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հաստատվել է 2023 թվականի պետական նպատակային ծրագրերի ցանկը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է 2023 թվականին իրականացվելիք գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի ցանկը:

Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման են ներկայացվել 8 գիտական ծրագրեր: Ցանկում ներառված են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 7 եւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 1 պետական նպատակային ծրագրեր:

Ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է մոտ 7 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետազոտությունները ներկայացվել են հետեւյալ գիտական կազմակերպությունների կողմից՝ *«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ»,* ԳԱԱ *«Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ»,* ԳԱԱ *«Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ»,* ԳԱԱ *«Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն»,* ԳԱԱ *«Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ»,* ԳԱԱ *«Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ»,* ԳԱԱ *«Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ»:*

Վերոնշյալ ծրագրերը 2023 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով կներկայացվեն Ազգային ժողով:

Հաստատվել է դպրոցների ֆինանսավորման կարգը

սկիզբը՝ էջ 1

Նոր նախագծով առաջարկվում է հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով մի շարք սկզբունքներ՝ միասնական մոտեցման ապահովում բոլոր հաստատությունների համար՝ անկախ վերջիններիս ենթակայության, բավարար պայմանների ստեղծում՝ հաստատությունների բնականոն գործունեության համար, ինչպես նաեւ պետական միջոցների օգտագործման արդյունավետության ապահովում:

Հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է հետեւյալ մեթոդաբանությամբ՝ ըստ իրենց կողմից իրականացվող ուսումնական ծրագրերի եւ անկախ հաստատությունների ենթակայության՝ ընդհանուր բանաձեւով:

Համաձայն նախագծով առաջարկվող բանաձեւի՝ ֆինանսավորման հաշվարկման համար հիմք են հանդիսանում մի շարք ելակետային տվյալներ, այդ թվում՝ դասարանների տարեկան միջին թիվը, մեկ դասարանին ընկնող ուսուցչական դրույքների միջին թիվը, նվազագույն աշխատավարձը, տարբեր տիպի լրավճարներ եւ այլն:

Ֆինանսավորման հաշվարկի համար հիմք են հանդիսանում նաեւ հաստատությունների պահպանման ծախսերը, ինչպես նաեւ վերջիններիս համար սահմանված հաստիքների թիվը:

Այդ ամենը, կիրառելով միասնական մոտեցում, հնարավորություն է տալիս հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը՝ յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

Որոշումն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ հիմնվելով կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ուղղությամբ իրականացված քարտեզագրման արդյունքների վրա:

Փոփոխություններ լիցենզավորման կարգերում

սկիզբը՝ էջ 1

Նախագծի ընդունման նպատակը նախադպրոցական կրթության բնագավառում գործող կազմակերպությունների համար լիցենզավորման պայմանների ու պահանջների հավասար դաշտի ապահովումն է, դրանց նկատմամբ միասնական վերահսկման մեխանիզմների ներդրումը՝ ապահովելով կրթության որակի բարձրացում եւ միասնական համակարգի ստեղծում: Այս ամենը կնպաստի այդ ոլորտի նկատմամբ պատասխանատվության եւ առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես՝ որոշման նախագծով նախատեսվում է, որ կլիցենզավորվեն ՀՀ-ում գործող կազմակերպություններ՝ հիմնականում զարգացման կենտրոնների անվան տակ, որոնք իրականացնում են նախադպրոցական տարբեր կրթական ծրագրեր (այդ թվում՝ այլընտրանքային, լրացուցիչ) եւ նախադպրոցական ծառայություններ: Լիցենզավորվելով եւ գործելով լիազոր մարմնի վերահսկողության ներքո՝ կենտրոնները կապահովեն երեխաների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջները (հիգիենիկ եւ սանիտարահամաճարակային, հակահրդեհային անվտանգություն եւ այլն) եւ կրթության բովանդակությամբ ներկայացվող վերջնարդյունքները, որոնք երեխաներին նախապատրաստում են դպրոցին:

Համաձայն նախագծի՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն իրականացնելու համար կազմակերպությունը լիցենզավորող մարմին պետք է ներկայացնի հայտ՝ նշելով իր՝ նախկինում ստացած լիցենզիայի վավերապայմանները, իսկ իրավաբանական անձինք՝ նաեւ պետական գրանցման համարը, ինչպես նաեւ գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին, եթե գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ չեն սահմանվել:

Քանի որ օտարերկրյա քաղաքացիների՝ օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվություն տալու դեպքում նախատեսված են միայն լրացուցիչ պահանջներ, որոնք վերաբերում են միայն դասախոսական կազմին, ուսումնական պլաններին եւ ծրագրերին, գրադարանային հագեցվածությանը, ապա կարգով սահմանվել է, որ միայն լիցենզավորված մասնագիտությունների դեպքում կարող է ուսումնական հաստատությունը դիմել համապատասխան թույլտվություն ստանալու համար:

Մի շարք պահանջներ՝ կապված ուսումնական տարածքի հասարակական նպատակային նշանակության (շատ դեպքերում ներկայացվում են արտադրական նշանակությամբ տարածքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայականներ), հիմնական մանկավարժական կազմի, բժշկական մասնագիտությունների լիցենզավորման, լիցենզիաների ներդիրների տրամադրման հետ, նույնպես կարեւոր են, եւ կարգերում նախատեսված են համապատասխան փոփոխություններ:

Կրթական ծրագրի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին տեղեկանքը կարգերից հանելու հանգամանքը պայմանավորված է լիցենզավորման բնագավառում վարչարարության պարզեցման նպատակով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության հետ:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պաշտոնական

Սահմանվել են նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները

ՀՀ կառավարության որոշմամբ՝ սահմանվել են պետական եւ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները:

Համաձայն հիմնավորման՝ նախադպրոցական կրթության ոլորտում լրջագույն խնդիր է հաստատությունների գործառնության միասնական սկզբունքների եւ մեթոդաբանության բացակայությունը, ինչը էապես նվազեցնում է նախադպրոցական ծառայությունների որակի վերահսկողության եւ պետական չափորոշիչների արդյունավետ կիրառման հնարավորությունները: Մասնավորապես՝ խիստ տարբեր են ոչ միայն նախադպրոցական հաստատությունների սննդի, պահպանմանն ուղղված կոմունալ ծախսերի հաշվարկման մեթոդաբանություններն ու մեծությունները, այլ նաեւ աշխատակիցների վարձատրության չափերն ու մոտեցումները:

Այս խնդիրների լուծման նպատակով Կառավարության որոշմամբ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերը դասակարգվել են ըստ հետեւյալ չափանիշների՝ վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմեր: Սահմանվող վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները տարածվում են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների վրա:

Այսպիսով՝ Կառավարության որոշման ընդունմամբ հստակեցվում են նախադպրոցական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմերի վարձատրության սկզբունքները՝ ստեղծելով նախադրյալներ վարձատրության քաղաքականության շարունակական բարելավման ուղղությամբ՝ համակարգային մոտեցման շրջանակում: Աշխատակիցների վարձատրության խրախուսումը կխթանի նոր եւ որակյալ կադրերի մուտքը այդ հաստատություններ՝ ապահովելով նախադպրոցական ծառայությունների որակի շարունակական բարձրացման նախադրյալներ:

Որոշման ընդունումը թույլ կտա նաեւ ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ անձնակազմի վարձատրության միասնական քաղաքականություն:

Նշենք, որ նրկայում ՀՀ-ում գործում է 906 համայնքային, գերատեսչական եւ ոչ պետական նախադպրոցական հաստատություն, որոնցից 701-ը՝ մանկապարտեզ, 70-ը՝ մսուր-մանկապարտեզ, 135-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 842-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական եւ 54-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 34.7%, քաղաքներում՝ 39.6%, գյուղերում՝ 25.4%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 26 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 89.7%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 91 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 13 երեխա: 5 տարեկան բնակչության շրջանում երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում կազմել է 64.4%: Ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ նախադպրոցական հաստատությունների թիվն աճել է 22-ով, 3-5 տարեկան բնակչության շրջանում երեխաների ընդգրկվածությունը՝ 6 %-ով:

Հ. Հ.

Աշխարհի հետ

Մեդիադաշտի բարեփոխումներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանն** ընդունել է ՀՀ-ում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար **Մարտինա Շմիդտի** գլխավորած պատվիրակությանը, որը Երեւանում է գտնվում ԵԽ պատրաստած *«Հայաստանի մեդիադաշտի կարիքների գնահատման զեկույցը»* ներկայացնելու նպատակով:

Ողջունելով հյուրերին՝ Ալֆրեդ Քոչարյանը նշել է, որ մեդիադաշտի բարեփոխումները եւ ԶԼՄ-ների ազատությունը ժողովրդավարական երկրի հիմնասյուներից են: Նրա խոսքով՝ Եվրոպայի խորհրդի բոլոր ծրագրերն օգտակար փորձառություն են ցանկացած երկրի համար, այդ թվում՝ մեդիագրագիտության ոլորտում:

Մարտինա Շմիդտը տեղեկացրել է, որ Եվրոպայի խորհուրդը պատրաստել է Հայաստանի մեդիադաշտի կարիքների գնահատման զեկույց, որը վերլուծում է ներպետական օրենսդրական դաշտը՝ ներառյալ

ԶԼՄ-ների ազատությունը, խոսքի ազատությունը, ապատեղեկատվության դեմ պայքարը, մեդիագրագիտության հետ կապված հարցերը եւ դրանց համապատասխանեցումը Եվրոպայի խորհրդի չափանիշներին: Նրա խոսքով՝ կարիքների գնահատման զեկույցի արդյունքներն ու առաջարկությունները, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի աջակցությունը համապատասխան ոլորտում կներկայացվի պանելային քննարկման ձեւաչափով:

Եվրոպայի խորհրդի պատվիրակության անդամներին, մասնավորապես, հետաքրքրել է մեդիագրագիտության բարձրացման ուղղությամբ ԿԳՄՍ նախարարության իրականացրած աշխատանքները:

Նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, կարեւորելով մեդիագրագիտության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, տեղեկացրել է, որ հանրակրթության պետական չափորոշչում ներառված են ժողովրդավարության եւ քաղաքացիական կարողունակությունների զարգացման, ինչպես նաեւ մեդիագրագիտության վերաբերյալ ուսումնական նյութեր:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հանրակրթություն

Մեկնարկել է տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը

Ուսումնական տարվա սկզբից տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը մեկնարկել է 23 հանրակրթական ուսումնական հաստատություններում, որոնցից 7-ում՝ պարսկերեն, 3-ում՝ վրացերեն, 9-ում՝ թուրքերեն, 4-ում՝ ադրբեջաներեն:

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2022 թ. մայիսին հանրակրթական ուսումնական հաստատություններում հարցում է կատարել՝ որպես 3-րդ օտար լեզու կամ խմբակ տարածաշրջանային որեւէ լեզվի ուսուցում կազմակերպելու վերաբերյալ: Հարցման արդյունքում՝ ստացել ենք շուրջ 400 դրական արձագանք, որի մեծ մասը եղել է ադրբեջաներենի եւ թուրքերենի ուսուցում կազմակերպելու ցանկության վերաբերյալ: Հաստատությունները տեղեկատվություն են տրամադրել նաեւ մասնագետի առկայության կամ բացակայության մասին: Նախարարությունը բազմաթիվ գրություններ եւ զանգեր է ստանում համապատասխան մասնագետներից, որոնք դասավանդման ցանկություն են հայտնում: Վերջիններին տրամադրվում է տարածաշրջանային լեզուների ուսուցման պատրաստակամություն հայտնած հաստատությունների ցանկը»,- «Կրթություն» շաբաթաթերթի հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են նախարարությունից:

Ըստ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության ներկայացրած տեղեկատվության՝ վերոնշյալ հաստատությունների մի մասում տարածաշրջանային լեզուների ուսուցումն իրականացվում է խմբակի ձեւաչափով, որոշներում՝ 3-րդ օտար լեզվի: Կան հաստատություններ, որոնցում ուսուցումն իրականացվում է ե՛ւ 3-րդ օտար լեզվի, ե՛ւ խմբակի ձեւաչափով: Խմբակի դեպքում անհրաժեշտ է, որ դասավանդողն ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն, իսկ 3-րդ օտար լեզվի ուսուցման դեպքում՝ համապատասխանի *«Հանրակրթության մասին»* օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին:

«ԿԳՄՍ նախարարությունը տարածաշրջանային լեզուների՝ պարսկերենի, վրացերենի, թուրքերենի, ադրբեջաներենի առարկայական ծրագրերը մշակելիս համագործակցել է համապատասխան մասնագետների եւ Երեւանի պետական համալսարանի հետ: Մշակված ծրագրերը սահմանված կարգով ներկայացվել են մասնագիտական կարծիքի, որից հետո երաշխավորվել են գործածության ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով: Նախարարի հրամանով հաստատված առարկայական ծրագրերը, ինչպես նաեւ նախարարության եւ Երեւանի պետական համալսարանի համագործակցությամբ տրամադրած ուսումնական նյութերի հղումների ցանկը տրամադրվել են հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ 2022-2023 ուսումնական տարվանից ուսուցումը կազմակերպելու համար: Ադրբեջաներենի եւ թուրքերենի ուսուցումը կազմակերպվելու է բացառապես ավագ դասարաններում՝ 10-12-րդ դասարանների սովորողների համար: Վրացերենի եւ պարսկերենի ուսուցումը կազմակերպվում է կրտսեր եւ միջին դասարաններից»,- տեղեկացրել են նախարարությունից:

Քննարկումների ընթացքում հաստատություններին տեղեկացվել է, որ համապատասխան մասնագետ ունենալու դեպքում նրանք ազատ են տարածաշրջանային լեզուների ուսուցումը կազմակերպելու հարցում:

Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա դրանց նյութերը, ըստ ԿԳՄՍՆ-ի, ներկայում փորձարկվում է, որի արդյունքների հիման վրա կմեկնարկի դասագրքերի ստեղծման գործընթացը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Երկարօրյա

Հաստատվել են կրթական օրինակելի ծրագրերը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրերը:

Օրինակելի ծրագրերը կազմված են *«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի»* պահանջին համապատասխան:

Ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական ծրագրերն իրենց մեջ ներառում են երկարօրյա խմբի սովորողների սննդի, հանգստի, դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարօրյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո սովորողի համար իրականացվում է սննդի կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 20 րոպե տեւողությամբ: Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո սովորողի համար իրականացվում է հանգստի (այդ թվում՝ զբոսանքի) կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 80 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե տեւողությամբ: Սովորողի համար իրականացվում է նաեւ դասապատրաստում՝ 1-4-րդ դասարաններում՝ 2 ակադեմիական ժամ, իսկ 5-9-րդ դասարաններում՝ 3 ակադեմիական ժամ:

Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետեւյալ ծրագրերը՝

- Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաեւ դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական եւ միջին դպրոց):

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր:

- Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր:

Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաեւ դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագրի նպատակներն են՝ իրականացնել խմբում ընդգրկված բոլոր սովորողների դասապատրաստման գործընթացը եւ տրամադրել որակյալ մանկավարժամեթոդական ծառայություններ, աջակցել ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ուսումնական նյութի յուրացման գործընթացում, ինչպես նաեւ նպաստել եւ աջակցել սովորողների ինքնուրույն սովորելու հմտություններին, ստեղծագործական ունակությունների եւ ինքնակազմակերպման կարողությունների ձեւավորմանն ու զարգացմանը: Միջին դպրոցում այն նպատակ ունի նաեւ բարելավել որեւէ առարկայի (առարկաների) թեմատիկ գրավոր, բանավոր եւ գործնական աշխատանքներից 10 միավորային սանդղակով 1-3 միավոր գնահատված սովորողների ուսումնառության արդյունքները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագրի նպատակներն են՝ սովորողներին աջակցել անհատական ուսուցման պլանով սահմանված ուսումնական նյութի յուրացման գործընթացում, տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանին համապատասխան աջակցության ծառայություններ, դասապատրաստման գործընթացում կիրառել անհատականացված մոտեցումներ, նպաստել սովորողների ներուժի բացահայտմանը եւ այլն:

Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագրի նպատակներն են՝ սովորողներին մատուցել ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին լրացուցիչ կրթական ծառայություններ, յուրաքանչյուր սովորողի տրամադրել որակյալ կրթական, ըստ անհրաժեշտության՝ մանկավարժահոգեբանական ծառայություններ, սովորողների մոտ, զարգացնել սոցիալական հմտություններ եւ այլն:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցումն իրականացվում է երկարօրյա խմբում ընդգրկված մյուս սովորողների հետ համատեղ, առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութերի՝ դասապատրաստման միջոցով յուրացման համար:

Հ. Հ.

Նախադպրոցական

Ուժի մեջ է մտել 0-6 տարեկան երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրելու կարգը

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանի** N 34-Ն հրամանով հաստատվել է 0-6 տարեկան երեխաների կրթության եւ զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը: Հրամանն ուժի մեջ է մտել 2022 թվականի սեպտեմբերի 15-ից:

Սահմանված է, որ 0-6 տարեկան երեխայի կրթության եւ զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հիմք է հանդիսանում երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԶԱՊԿ) գնահատումը, որն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան: Գնահատումը նպատակ ունի սահմանելու՝

- երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական եւ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ.

- սահմանված կարգով եւ դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը.

- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները եւ տեւողությունը:

Գնահատումն իրականացվում է երեք մակարդակներում՝

- Նախադպրոցական մակարդակի գնահատում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների եւ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից (առկայության դեպքում).

- Տարածքային մակարդակի գնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (ՏՄԱԿ) մասնագետների կողմից.

- Հանրապետական մակարդակի գնահատում՝ բողոքարկված դեպքերի գնահատում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) մասնագետների կողմից:

Նախադպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական (ՄՀ) ծառայությունները տրամադրվում են նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո՝ կանխարգելիչ միջամտությունների պլանով, որը մշակվում եւ իրականացվում է՝ նախադպրոցական ուսումնական հաստատության (ՆՈՒՀ) մանկավարժների կողմից մեկ կիսամյակի համար:

Մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երեխային տրամադրվող ծառայությունների ժամանակահատվածը, տեւողությունը, ծավալը, ծառայության տեսակը եւ տրամադրման գրաֆիկը մշակվում է նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա՝ ՆՈՒՀ-ի եւ ՏՄԱԿ-ի աջակցության խմբի կողմից եւ հաստատվում է ՆՈՒՀ-ի տնօրենի կողմից:

Մանկավարժները եւ աջակցության խումբը համագործակցելով երեխայի ծնողների հետ՝ իրականացնում են կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված գործողությունները՝ աջակցելով երեխային, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակությունը հասակակիցների հետ զուգընթաց յուրացնելու գործընթացում:

Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են ՏՄԱԿ-ի կողմից այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել եւ ճանաչվել են՝ որպես կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԶԱՊԿ) ունեցող: ՏՄԱԿ-ում ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար, ՏՄԱԿ-ի միջոցներով, ուսումնական պարապմունքներից հետո, ըստ նախատեսված տեւողության, ծավալի եւ երեխայի անահատական ուսուցման եւ զարգացման պլանում (ԱՈՒԶՊ) նշված ժամանակացույցի:

Հանրապետական մակարդակում ծառայությունները տրամադրվում են Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) մասնագետների կողմից ՏՄԱԿ-ներին, նախադպրոցական ուսումնական հաստատություններին, այլ գերատեսչությունների համապատասխան բաժիններին, ունեցող երեխաներին, նրանց ծնողներին:

ՀՄԿ-ն ապահովում է կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ու ծառայությունների տրամադրման միասնական մոտեցումների կիրառումը՝ համակարգելով եւ մշտադիտարկելով ՏՄԱԿ-ների աշխատանքը, ինչպես նաեւ ստեղծում է կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը միտված մեթոդական գրականություն, դիդակտիկ նյութեր եւ ուսումնական նյութերի հարմարեցումներ:

Մանկավարժահոգեբանական ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական գործի թղթապանակ, որը ներառում է՝

- երեխայի նախադպրոցական եւ/կամ տարածքային մակարդակների գնահատման արդյունքների արձանագրությունները, եզրակացությունները, ԿԶԱՊԿ-ի վերաբերյալ վկայագիրը, ՝ԱՈՒԶՊ-ը, երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակացույցը,

- երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրած եւ արձանագրած ցանկացած տեղեկատվություն եւ դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկարներ, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ եւ այլն):

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Համագործակցություն

8,3 միլիոն շվեյցարական ֆրանկ՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության համար

Տեղի է ունեցել *«Գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում 2022-2025 թթ.՝ ՄԱՎԵՏԱ»* երկարաժամկետ զարգացման նախագծի մեկնարկի միջոցառումը, որը կազմակերպել էր Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակը:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** նախագիծը համաֆինանսավորող եւ իրականացնող գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաեւ ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչներ:

Ժաննա Անդրեասյանը ողջունել է ծրագրի հիմնական փուլի մեկնարկի կապակցությամբ, որն ուղղված է գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացմանը, ինչը, ըստ փոխնախարարի, մեր երկրի համար կարեւոր եւ առաջնային ուղղություններից է:

«Այդ առաջնահերթությունները հստակ ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրում եւ «Կրթության զարգացման՝ մինչեւ 2030 թվականը պետական ծրագրիե նախագծում, որտեղ մենք նախանշել ենք բավականին հավակնոտ նպատակներ: ՄԿՈՒ ոլորտում մեր անելիքները շատ են, որոնք առաջին հերթին ուղղված են այդ բնագավառի կադրերի զբաղվածունակությանը եւ դրա ներուժի օգտագործմանը՝ ի նպաստ հանրային եւ տնտեսության զարգացման»,- նշել է փոխնախարարը՝ հավելելով, որ այդ անելիքների մի մասը համահունչ է մեկնարկող ծրագրին:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ծրագրի բոլոր գործընկերներին. *«Կարեւորում ենք պետության, միջազգային կազմակերպությունների, տեղական դաշտի եւ մասնավոր սեկտորի համագործակցությունը. միայն այս ճանապարհով կարող ենք հասնել կրթության որակական փոփոխությունների: Կարեւոր է, որ ծրագրի շրջանակում էլ ավելի առարկայական դառնան աշխատանքի վրա հիմնված ուսուցման այն ձեւաչափերը, որոնք ներկայում քննարկվում են «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» նոր օրենքի նախագծի շրջանակում: Հույս ունեմ, որ այս ծրագրի շրջանակում կատարված աշխատանքը կհամադրվի օրենսդրական դաշտի անելիքներին եւ կունենանք հիանալի արդյունք՝ մի կողմից իրավական կարգավորումներ, իսկ մյուս կողմից՝ արդիական եւ նորարարական ծրագրեր: Սա է կրթության զարգացման ճանապարհը, եւ ուրախ եմ, որ այդ ճանապարհին ունենք շարունակական համագործակցություն»:*

ԿԳՄՍ նախարարի տեղակալը վստահեցրել է, որ ՀՀ կառավարությունը, ի դեմս ԿԳՄՍ եւ էկոնոմիկայի նախարարությունների, կցուցաբերի ինստիտուցիոնալ անհրաժեշտ աջակցություն՝ ծրագրի սահուն իրականացման համար:

Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի տարածաշրջանային տնօրենի տեղակալ **Վերներ Թութի** խոսքով՝ ծրագիրը նպատակ ունի բարելավելու գյուղատնտեսության եւ հարակից ոլորտների մասնագետների եւ շրջանավարտների գիտելիքներն ու հմտությունները:

Ռազմավարական զարգացման գործակալության եւ Գերմանիայի զարգացման գործակալության (GIZ) ներկայացուցիչները ներկայացրել են *«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում»* ծրագրի մանրամասները: Նշվել է, որ Շվեյցարիան, Ավստրիայի եւ Գերմանիայի հետ համատեղ, մեկնարկել են ՄԱՎԵՏԱ նախագծի հիմնական փուլը, որպեսզի աջակցեն ՀՀ կառավարությանը գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներին:

